ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Փամբակ համայնքի ավագանու թիվ 12 հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Փամբակ	Ավագանու հերթական նիստ	27.12.2024թ.	13:00	Փամբակի համայնքապետարան ավագանու նստավայր (գ. Փամբակ, 1 փող. 23)

ՕՐԱԿԱՐԳ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2024Թ. ՀԵՐԹԱԿԱՆ
ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ
«27» Դեկտեմբերի 2024թ. Ժամը 13.00

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
զեկ. Ս. Կոստանդյան

2. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան

3. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան

4. «Արմենիա Թրի Փրոջեքթ» («Էյ Թի Փի») հասարակական բարեգործական կազմակերպությանը անշարժ գույքի հարկի գծով արտոնություն տրամադրելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Ղազար Տելեմակի Եղիազարյանին օտարելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

7. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

8. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

9. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

10. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

11. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

13. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

14. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

15. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2024թ-ի IV եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

16. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

17. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2024 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
3. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
4. «Արմենիա Թրի Փրոջեքթ» («Էյ Թի Փի») հասարակական բարեգործական կազմակերպությանը անշարժ գույքի հարկի գծով արտոնություն տրամադրելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Ղազար Տելեմակի Եղիազարյանին օտարելու մասին:
6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
7. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
8. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
9. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
10. «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
11. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
13. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

14. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
15. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2024թ-ի IV եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:
16. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:
17. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ն

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի 8, 9, 10, 11, 12, 13, 14-րդ հոդվածներով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 14-րդ հոդվածներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում սահմանել տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում սահմանել տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Փամբակ համայնքի բնակավայրերի համար սույն որոշման N 1 հավելվածի՝ տեղական տուրքերի 6, 7, 9, 10, 11, 12, 13, 16, 17, 18, 20-րդ կետերում և 19-րդ կետի 2-րդ ենթակետում օրենքով սահմանված դրույքաչափերի վերին սանդղակների վրա կիրառվել է 0.5 գործակից:

4. Փամբակ համայնքի Մարգահովիտ, Բազում, Արջուտ բնակավայրերի համար սույն որոշման N 1 հավելվածի՝ տեղական տուրքերի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետում օրենքով սահմանված դրույքաչափերի վերին սանդղակների վրա ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխան կիրառվել է 2 գործակից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Փամբակ համայնքի ավագանու
2024 թվականի _____ ___-ի թիվ ___-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

/Փամբակ համայնքի Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Դեբետ, Եղեգնուտ, Լեռնապատ, Լեռնաջուր, Ձորագետ, Ձորագյուղ, Մարգահովիտ, Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ և Քարաբերդ գյուղական բնակավայրերի/

Հ/Հ	Տեղական տուրքերի անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար.	
1)	Հիմնական շենքերի և շինությունների համար՝	
ա.	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար	15000 /տասնհինգ հազար/
բ.	մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15000 /տասնհինգ հազար/
2)	Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝	--
ա.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	
-	Մարգահովիտ, Բազում, Արջուտ բնակավայրերի համար	60000 /վաթսուն հազար/
-	Լեռնապատ, Փամբակ, Ձորագյուղ, Ձորագետ, Ազնվաձոր, Վահագնի, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Քարաբերդ, Անտառամուտ, Լեռնաջուր բնակավայրերի համար՝	30000 /երեսուն հազար/
բ.	501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր	

	մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	
-	Մարգահովիտ, Բազում, Արջուտ բնակավայրերի համար	200000 /երկու հարյուր հազար/
-	Լեռնապատ, Փամբակ, Ձորագյուղ, Ձորագետ, Ազնվաձոր, Վահագնի, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Քարաբերդ, Անտառամուտ, Լեռնաջուր բնակավայրերի համար՝	100000 /հարյուր հազար/
գ.	1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	
-	Մարգահովիտ, Բազում, Արջուտ բնակավայրերի համար	400000 /չորս հարյուր հազար/
-	Լեռնապատ, Փամբակ, Ձորագյուղ, Ձորագետ, Ազնվաձոր, Վահագնի, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Քարաբերդ, Անտառամուտ, Լեռնաջուր բնակավայրերի համար՝	200000 /երկու հարյուր հազար/
դ.	3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը
3)	Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝	--
ա.	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	
-	Մարգահովիտ, Բազում, Արջուտ բնակավայրերի համար	10000 /տաս հազար/
-	Լեռնապատ, Փամբակ, Ձորագյուղ, Ձորագետ, Ազնվաձոր, Վահագնի, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Քարաբերդ, Անտառամուտ, Լեռնաջուր բնակավայրերի համար՝	5000 /հին հազար/
բ.	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	
-	Մարգահովիտ, Բազում, Արջուտ բնակավայրերի համար	20000 /քսան հազար/

-	Լեռնապատ, Փամբակ, Ձորագյուղ, Ձորագետ, Ազնվաձոր, Վահագնի, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Քարաբերդ, Անտառամուտ, Լեռնաջուր բնակավայրերի համար՝	10000 /տաս հազար/
2.	ամայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
1)	Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝	3000 /երեք հազար/
2)	Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.	
3)	Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 03-ի թիվ 596-Ն որոշման «այսուհետ՝ Որոշում» իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.	
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի,	5000

	շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝	/հինգ հազար/
4.	Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200000 /երկու հարյուր հազար/
1)	համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200000 /երկու հարյուր հազար/
2)	համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200000 /երկուհարյուր հազար/
5.	ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	100000 /մեկ հարյուր հազար/
1)	ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրցուցային տարվա համարր	100000 /մեկ հարյուր հազար/
2)	ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	100000 /մեկ հարյուր հազար/
6.	համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների	30000 /երեսուն հազար/

	տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
7.	ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	10000 /տաս հազար/
8.	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	50000 /հիսուն հազար/
9.	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝	
1)	Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	5000 /հինգ հազար/
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	6500 /վեց հազար հինգ հարյուր/
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10000 /տաս հազար/
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	12500 /տասներկու հազար հինգ հարյուր/
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/

զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	50500 /հիսուն հազար հինգ հարյուր/
2)	Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	5000 /հինգ հազար/
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	6500 /վեց հազար հինգ հարյուր/
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10000 /տաս հազար/
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	12500 /տասներկու հազար հինգ հարյուր/
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	50500 /հիսուն հազար հինգ հարյուր/
10.	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝	175 /մեկ հարյուր յոթանասունհինգ /
11.	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
1)	Առևտրի օբյեկտների համար	25000 /քսանհինգ հազար/
2)	Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	50000 /հիսուն

		հազար/
3)	Բաղնիքների /սաունաների/ համար	250000 /երկու հարյուր հիսուն հազար/
4)	Խաղատների համար	500000 /հինգ հարյուր հազար/
5)	Շահումով խաղերի համար	250000 /երկու հարյուր հիսուն հազար/
6)	Վիճակախաղերի համար	75000 /յոթանասունհինգ հազար/
12.	Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝	
1)	Հիմնական շինությունների ներսում՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2500 /երկու հազար հինգ հարյուր/
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	5000 /հինգ հազար/
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	7500 /յոթ հազար հինգ հարյուր/
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	10000 /տաս հազար/
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15000 /տասնհինգ հազար/
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	25000 /քսանհինգ հազար/
2)	Ոչ հիմնական շինությունների ներսում՝	
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	500 /հինգ հարյուր/
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1000 /հազար/
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2000 /երկու հազար/
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4000 /չորս հազար/
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	7500 /յոթ հազար հինգ հարյուր/
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես	12500 /տասներկու

	ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	հազար հինգ հարյուր/
13.	Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	--
1)	Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	1000 /մեկ հազար/
2)	Թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	1750 /մեկ հազար յոթ հարյուր հիսուն/
3)	Սոցիալական գովազդի համար	0 դրամ
4)	Այլ արտաքին գովազդի համար	750 /յոթ հարյուր հիսուն/
5)	Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված սահմանված տուրքի 25%-ի չափով	188 /մեկ հարյուր ութսունութ/
6)	Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.	75 /յոթանասունհինգ/
14.	Փամբակ համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը /զինանշանը, անվանումը/, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝	100000 /մեկ հարյուր հազար/
15.	Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝	10000 /տաս հազար/
16.	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման	250000 /երկու հարյուր հիսուն հազար/

	թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
17.	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	--
1)	3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	1250000/մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/
2)	5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/
3)	7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	3500000 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/
4)	10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝	5000000 /հինգ միլիոն/
18.	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝	
1)	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝	20000 /քսան հազար/
2)	Հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝	150000 /մեկ հարյուր հիսուն հազար/
19	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝	20000 /քսան հազար/
20	Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային /մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ/ և ձմեռային /նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ/ սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝	5000 /հինգ հազար/

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Փամբակ համայնքի ավագանու
2024 թվականի _____ ___-ի թիվ ___-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

/Փամբակ համայնքի Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Դեբետ, Եղեգնուտ, Լեռնապատ, Լեռնաջուր, Ձորագետ, Ձորագյուղ, Մարգահովիտ, Վահագնի, Վահագնաձոր, Փամբակ և Քարաբերդ գյուղական բնակավայրերի/

Հ/Հ	Տեղական վճարների անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/
1.	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Մինչև 100-500 քմ Մինչև 500-1000 քմ 1000 քմ և ավելի	5000 10000 15000
2.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Մինչև 100-500 քմ Մինչև 500-1000 քմ 1000 քմ և ավելի	5000 10000 15000
3.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Մինչև 500 քմ 500-1000 քմ 1000 քմ և ավելի	5000 10000 15000
4.	Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի	

	/փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Մինչև 1000 քմ 1000 քմ և ավելի	 3000 5000
5.	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	5000
6.	Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	3000
7.	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքներ կազմակերպելու համար աղբահանության վճար՝	
1)	Բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական՝	100
2)	Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճարը՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի՝	
ա.	Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	70
բ.	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների /ավտոկայանների, երկաթուղային կայարանների/, հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեղված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	30
գ.	Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	20
դ.	Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	5
	Իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	8
ե.	Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով /այդ թվում՝ ավտոկայանատեղի/ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	10
զ.	Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ	

	տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 7.2.1-7.2.5 ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7.2.1-7.2.5 ենթակետերով սահմանված դրույքաչափերով.	
է.	Շինություններում /այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում/, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7.2.1-7.2.5 ենթակետերով սահմանված դրույքաչափերով.	
3)	Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	50
4)	Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին.	
5)	Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ 7.2.1-7.2.5 ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանել՝	
ա.	Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝	3000
բ.	Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար	10000
գ.	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրական շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է 1 խմ աղբի համար՝	200

	մեկ տոննա աղբի համար՝	500
8.	Ջրմուղ-կոյուղու համար համայնքի այն բնակավայրերում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց՝ փոխհատուցման վճար՝ Ջրամատակարարման համար ՝ 1 խմ Եթե ջրաչափ տեղադրված չէ յուրաքանչյուր տնտեսության համար՝ Ջրահեռացման համար տունը տարեկան	 50 500 2000 դրամ
9.	Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի, օգտվող յուրաքանչյուր տնտեսության համար սահմանել ամսեկան	500
10.	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով սեփականաշնորհված բնակարանների 1 ք.մ–ի համար ամսեկան	10
11.	Համայնքային ենթակայության նախադպրոցական կազմակերպությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	3000
12.	Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական, արվեստի դպրոցներ և այլն)՝ ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	
1)	Մարգահովիտ գյուղի «Կրթամարզամշակութային համալիր» ՀՈԱԿ-ի ներքո գործող երաժշտական դպրոցի /խմբի/ ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	3000

2)	Մարգահովիտ գյուղի «Կրթամարզամշակութային համալիր» ՀՈԱԿ-ի ներքո գործող նկարչության խմբի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	2500
13.	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	10000
14.	Համայնքի սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններիև համայնքային երթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	0
15.	Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝	500
16.	Համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝	
1)	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության համար	500
2)	Ծննդօգնության թեթև միջամտության համար	1000
3)	Ծննդօգնության ծանր միջամտության համար	3000
4)	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյուառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից /բացառությամբ ,,Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում,, պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճա-րակային միջոցառումների/՝	
ա.	Մանր կենդանիների համար	100
բ.	Խոշոր կենդանիների համար	200
5)	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծերի դեմ պայքարի համար	400
6)	Ախտահանություն՝ մեկ քառակուսի մետրի համար	100
7)	Միջատազերծում /դիզինսեկցիա/՝ մեկ քառակուսի մետրի համար	100
8)	Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ մեկ քառակուսի մետրի համար	200/
9)	Արհեստական սերմնավորման համար	5000
10)	Մանր կենդանու հերձման համար	1000
11)	Խոշոր կենդանու հերձման համար	3000
12)	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից, յուրաքանչյուր այցելության համար	1000
13)	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու	

	տեսակից	
ա.	Մանր կենդանիներ՝	1000
բ.	Խոշոր կենդանիներ	2000
14)	Կենդանիների հետսպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	
ա.	Մանր կենդանիներ՝	1000
բ.	Խոշոր կենդանիներ	2000
17.	Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	3000
18.	Համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	0

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

«2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկանք-հիմնավորում

2025 թվականի համար ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագիծը կազմվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետերին համապատասխան՝ Փամբակ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական տուրքերը /օրենքի նշված դրույթը ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածում/: «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին, 11-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ, կիրառելով օրենքով սահմանված համապատասխան գործակիցներ, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև կիրառելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը՝ որոշման նախագծով սահմանվել են 2025 թվականի համար ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված են, ըստ տուրքերի տեսակների, տուրքերի նվազագույն և առավելագույն դրույքաչափերը: 2025թ-ի համար տեղական տուրքեր սահմանվել է 20 կետով:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի՝ տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե կամ բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող, օրենքի համաձայն բացված արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող, օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

2025թ-ի համար ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում տեղական վճար սահմանվել է 18 կետով:

Օրենքով սահմանված կարգով Փամբակ համայնքում 2025 թվականի համար առաջարկվող (նախատեսվող) տեղական վճարների դրույքաչափերը ներկայացվում է Փամբակ համայնքի ավագանու որոշման նախագծի N 1 և 2 հավելվածների համաձայն:

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ն

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել 2025 թվականի համար Հայաստան Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների համար կիրառել արտոնություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի -ի թիվ -Ն որոշման

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Համայնքի կողմից մատուցվող ծառայության անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/
1.	Սահմանել Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների համար վճարներ՝	
1)	«Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից սպասարկվող Դսեղ, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Փամբակ – Վանաձոր երթուղու ուղևորափոխադրման արժեքը 1 անձի համար /մինչև 6 տարեկան երեխայի համար անվճար/ սահմանել	
ա.	Դսեղ-Վանաձոր	400
բ.	Դեբետ-Վանաձոր	350
գ.	Եղեգնուտ-Վանաձոր	300
դ.	Վահագնաձոր-Վանաձոր	200
ե.	Փամբակ-Վանաձոր	100
2)	Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. տեխնիկայով «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների համար /ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը/	
ա.	Վար՝ 1 հա-ի համար	40000
բ.	Վար անմշակ հողամասում՝ 1 հա-ի համար	45000
գ.	Փխրեցում /ֆրեզ/՝ 1 հա-ի համար	50000
դ.	Հացահատիկային մշակաբույսերի ցանքս՝ 1 հա-ի համար	15000
ե.	Հացահատիկի հունձ՝ 1 հա-ի համար	30000
զ.	Կարտոֆիլի ցանքս՝ 1 հա-ի համար	30000
է.	Թորխ /քախան և բուկլից/՝ 1 հա-ի համար	30000
ը.	Հակերի կապում՝ 1 հատ	150
թ.	Թունաքիմիկատի ցրում՝ 1 հա-ի համար	8000
ժ.	Պարարտանյութի ցրում՝ 1 հա-ի համար	5000
ի.	Հողի գլանում՝ 1 հա-ի համար	15000
3)	Համայնքային սեփականություն հանդիսացող տրակտորներով «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների համար /ներառյալ դիզվառելիքը և վարորդի ծառայության վճարը/	
ա.	Խոտհունձ՝ 1 հա	25000
բ.	Բելառուս մակնիշի տրակտորի աշխատանքը՝ 1 ժամ	12000

գ.	CASE մակնիշի տրակտորի աշխատանքը՝ 1 ժամ	15000
4)	Համայնքային սեփականություն հանդիսացող բեռնատարներով «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների համար /ներառյալ դիզվառելիքը և վարորդի ծառայության վճարը/	
ա.	Համայնքի բնակչի համար 1կմ-ի համար /սպասարկումն իրականացվելու է 20 կմ և ավել պատվերի դեպքում/	1200
բ.	Համայնքի բնակիչ չհանդիսացող անձի համար 1կմ-ի համար /սպասարկումն իրականացվելու է 20 կմ և ավել պատվերի դեպքում/	1500
5)	Համայնքային սեփականություն հանդիսացող ավտոաշտարակի ծառայության մատուցում	
ա.	Համայնքի ներսում 1 ժամ	5000
բ.	Համայնքից դուրս 1 ժամ /սպասարկումն իրականացվելու է 3 ժամ և ավել պատվերի դեպքում/	8000
2.	«Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» ՀՈԱԿ-ի կողմից	
1)	գերեզմանափորի ծառայության մատուցման համար սահմանել վճար՝	
ա.	համայնքի բնակչի համար	5000
բ.	համայնքի բնակիչ չհանդիսացող անձի համար	10000
3.	Սահմանել Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հանդիսությունների սրահները օգտագործման տրամադրելու համար վճարներ՝	
1)	Մեկ օրվա համար	10000
2)	Երկու օրվա համար	15000
4.	Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի համայնքային ջրագծին միանալու համար սահմանել աբոնենտային վճար՝	50000
5.	Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հենասյուները վարձակալությամբ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր հենասյան համար վարձավճարը սահմանել՝ ամսական	100

Փամբակ համայնքի ղեկավար՝ Ս. Կոստանդյան

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

«ԱՐՄԵՆԻԱ ԹՐԻ ՓՐՈՋԵՔԹ» («ԷՅ ԹԻ ՓԻ») ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Լոռու մարզպետի 06.12.2024թ-ի N 01/111,1/10033-2024 գրությունը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «ԱՐՄԵՆԻԱ ԹՐԻ ՓՐՈՋԵՔԹ» («ԷՅ ԹԻ ՓԻ») բարեգործական հիմնադրամին համայնքի տարածքում անհատույց տրված հողամասերի համար անշարժ գույքի հարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով հաշվարկված անշարժ գույքի հարկից՝ 409517 (չորս հարյուր ինը հազար հինգ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամի չափով և դրա նկատմամբ հաշվարկած տույժերից՝ 83729 (ութսուներեք հազար յոթ հարյուր քսանինը) ՀՀ դրամի չափով, ընդամենը՝ 493246 (չորս հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ անշարժ գույքի հարկից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՂԱԶԱՐ ՏԵԼԵՄԱԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Ղազար Տելեմակի Եղիազարյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Ղազար Տելեմակի Եղիազարյանի կողմից վարձակալած Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-041-0203-0091 կադաստրային ծածկագրով 0,12 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 135300 (մեկ հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Բաժնի պետ 2.1- 1 Ա. Օհանյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2024 թվականի N -Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողամասեր.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի 06-102-0041-0019 ծածկագրով 0,32927 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 470 000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-0044-0016 ծածկագրով 0,10212 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0080-0055 ծածկագրով 0,15782 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 180 000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0080-0056 ծածկագրով 0,17199 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի 06-019-0021-0001 ծածկագրով 0,01978 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 105 000 /մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ:
6) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի 06-107-0003-0033 ծածկագրով 0,57449 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 1 940 000 /մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
7) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0241-0027 ծածկագրով 0,14649 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 170 000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:
8) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0245-0023 ծածկագրով 0,36319 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 410 000 /չորս հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:
9) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0574 ծածկագրով 0,32000 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 370 000 /երեք հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:
10) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0575 ծածկագրով 0,16094 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 190 000 /մեկ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:
11) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0576 ծածկագրով 0,32425 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 370 000 /երեք հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով 25 տարի ժամկետներով տրամադրվում են հողամասեր.
1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Անտառամուտ բնակավայրի 06-015-0121-0006 ծածկագրով 0,098811 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0226-0023 ծածկագրով 3,18860 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի արոտավայր՝ գյուղատնտեսական

գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-102-0041 ծածկագրով 0,2105 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0202-0011 ծածկագրով 0,09730 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի արոտավայր ՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:
5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0218-0048 ծածկագրով 0,09397 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի արոտավայր ՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

4. Կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրվում է ընդհանուր օգտագործման հողամաս.
1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0740-0002 ծածկագրով 0.01013 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամաս: Հողամասի տարեկան կառուցապատման վճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Կառուցապատման մրցույթի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ ՆԼ-640 լեռնահատկացման ակտը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականության հանդիսացող 06-108-0105-0009 կադաստրային ծածկագրով 4,0369 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտավայր գործառնական նշանակության հողամասը նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության:

2. Տալ համաձայնություն՝ Քարաբերդ գյուղի 06-108-0105-0009 կադաստրային ծածկագրում գտնվող 4,0369 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, առանց մրցույթի, մինչև 23.03.2049թ-ը «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն:

3. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 808000 /ութ հարյուր ութ հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2024 թվականի N -Ա

«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը ենթակետով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ.«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NL-640 լեռնահատկացման ակտը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝ Քարաբերդ գյուղի 06-108-0111-0002 կադաստրային ծածկագրում գտնվող 4,1356 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 23.03.2049թ-ը, առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 827000 /ութ հարյուր քսանյոթ հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2024 թվականի N -Ա

«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը ենթակետով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NԼ-640 լեռնահատկացման ակտը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Քարաբերդ գյուղի 06-108-0105-0005 կադաստրային ծածկագրում գտնվող 3,7879 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 23.03.2049թ-ը առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 757000 /յոթ հարյուր հիսունյոթ հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը ենթակետով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ.«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NL-640 լեռնահատկացման ակտը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝ Քարաբերդ գյուղի 06-108-0105-0010 կադաստրային ծածկագրում գտնվող 2,82277 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 23.03.2049թ-ը, առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 566000 /հինգ հարյուր վաթսունվեց հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N -Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականության հանդիսացող 06-108-0615-0002 կադաստրային ծածկագրով 1,56192 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտավայր գործառնական նշանակության հողամասը նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտասրական օբյեկտների գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2024 թվականի N -Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016թ-ի N 550-Ն որոշմամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով Նունե Սամվելի Սարդարյանի դիմումը, վարձակալության իրավունքի վկայականը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Նունե Սամվելի Սարդարյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրի 06-010-0112-0010 կադաստրային ծածկագրով 1,56044 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի հնդավոր գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 4 673 520 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ:

2. Տալ համաձայնություն Նունե Սամվելի Սարդարյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրի 06-010-0113-0038 կադաստրային ծածկագրով 2,2 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 2480500 (երկու միլիոն չորս հարյուր ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

3 Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 15 փետրվարի 2024 թվականի N 007-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2024 թվականի N -Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի«Վահգանաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի գրությունը՝ Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնք Վահագնաձոր գյուղի 3-րդ փողոց 9 մանկապարտեզ հասցեում գտնվող 06-102-0015-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Փամբակ համայնքի «Վահգանաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2024 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Առաջատար մասնագետ 3.1- 2 Կ. Շերմազանյանը

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
«27» Դեկտեմբերի 2024 թ-ի թիվ -Ա որոշման

2024 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում ձեռք բերված հիմնական միջոցների ցանկ

Հ/Հ	Հիմնական միջեցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Գինը /դրամ/	Գումարը /դրամ/
			Փաստացի (քանակը)	հաշվապահական տվյալներով (քանակը)		
1	Խոզանակ սարքավորում ИУЦЛ 32,00,000	2024	1	1	800000	800000
2	Գութան ПЛН-3-35П ԱՏԳԱԱ 8432100000	2024	1	1	800000	800 000
	ԸՆԴԱՄԵՆԸ		2	2	1,600,000	1,600,000

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ Կ. ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2024 թվականի N -Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ 2024Թ-Ի IV ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով «Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 08-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» 11 նոյեմբերի 2023 թվականի թիվ 129-Լ և «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգ սահմանելու մասին» թիվ 32-Ա որոշումները, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Ընդունել ի գիտություն Փամբակ համայնքի բյուջեից 2024թ-ի IV եռամսյակում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացված սոցիալական աջակցության /դրամական օգնության/ վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /սոցիալական աշխ./2.3- 5 Լ. Անդրիասյանը

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
«» հոկտեմբեր 2024թ-ի թիվ -Ա որոշման

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

2024թ-ի չորորդ եռամսյակի ընթացքում համայնքի բյուջեից անապահով ընտանիքներին հատկացված դրամական օգնության վերաբերյալ

Հ/Հ	Ամիս/ամսաթիվ	Հրամանի համար	Վարչական շրջան	ԱԱՀ, անձը հաստատող փաստաթուղթ	Սոցօգնության չափը
1	**24.10.2024թ.**	**1182-Ա**	Մարգահովիտ	Արաքսի Խաչիկի Մարտիրոսյան /ծնված՝ 10.02.1990թ./	50 000
2			Բազում	Գալինա Հայկազի Ղուկասյան /ծնված՝ 16.01.1961թ./	40 000
3				Նունե Լեռնիկի Սարգսյան /ծնված՝ 15.09.1968թ./	40 000
4			Վահագնի	Նելլի Ռաշիդի Կիրակոսյան /ծնված՝ 23.10.1979թ./	40 000
5	**27.11.2024թ.**	**1427-Ա**	Փամբակ	Սուրեն Ունանի Գալստյան /ծնված՝ 15.09.1957թ./	40 000
6			Մարգահովիտ	Սեյրան Սերգեյի Խաչատյան /ծնված՝ 18.12.1968թ./	40 000
7			Լեռնապատ	Վաղինակ Վրեժի Հակոբջանյան /ծնված՝ 03.07.1962թ./	50 000
			ԸՆԴԱՄԵՆԸ՝		300 000

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2024 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

1) Եկամուտների գծով ընդամենը - 743179100 /յոթ հարյուր քառասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ,

այդ թվում՝

ա. Վարչական բյուջեի մասով - 743179100 /յոթ հարյուր քառասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ.

բ. Ֆոնդային բյուջեի մասով - 133098700 /մեկ հարյուր երեսուներեք միլիոն իննսունութ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

2) Ծախսերի գծով ընդամենը - 743179100 /յոթ հարյուր քառասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ,

այդ թվում՝

ա. Վարչական բյուջեի մասով - 743179100 /յոթ հարյուր քառասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ.

բ. ֆոնդային բյուջեի մասով - 133098700 /մեկ հարյուր երեսուներեք միլիոն իննսունութ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

2. Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեի նախագծի կազմման ժամանակահատվածում բյուջեի դեֆիցիտ (պակասուրդ) կամ հավելուրդ չի առաջացել:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև: Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել համայնքի բյուջեով նախատեսված ընդամենը ծախսերի 15 %-ը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկանք-հիմնավորում

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեն հաստատելու հիմնավարման մասին:

<u>Համայնքի բյուջեի եկամուտներ</u>

Հարկային եկամուտների ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվել առկա ապառքները և 2024 թվականի հաշվարկային ցուցանիշները, քանի որ դեռևս 2025թ-ի հաշվարկային ցուցանիշներ չունենք: Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային մասը կազմում է 743179,1 հազար դրամ, որից հարկեր և տուրքեր՝ 103685,0 հազ. դրամ, պաշտոնական դրամաշնորհներ /դոտացիա/ 599720,1 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 39774,0 հազ. դրամ, որից՝ գույքի վարձակալություն՝ 10774,0 հազ. դրամ, վարչական գանձումներ՝ 19000,0 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 10000.0 հազ. դրամ:

Ընդամենը եկամուտներ 743179,1 հազար դրամ
այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով 743179,1 հազար դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով 133098,7 հազար դրամ /Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում/

<u>Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման</u>

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսերը կազմում է.

Ընդամենը ծախսեր 743179,1 հազար դրամ
այդ թվում

- Վարչական բյուջեի մասով 743179,1 հազար դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով 133098,7 հազար դրամ

Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Ընացիկ՝ վարչական ծախսերը կազմում է 743179,1 հազար դրամ.

Աշխատողների, աշխատավարձեր և հավելավճարներ հաղվածով նախատեսվել է 241447.1 հազար դրամ: Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսվել է 78986.0 հազ. դրամ: Դրամաշնորհ Փամբակ համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ներին՝ 268543.3 հազ. դրամ: Սոցիալական նպաստներ համայնքի անապահով ընտանիքներին՝ 6000.0 հազ. դրամ: Այլ ծախսեր՝ 148202.7

հազ. դրամ, որի մեջ մտնում է նաև պահուստային ֆոնդը՝ 142942.7 հազ. դրամ, որը հետագայում կօգտագործվի ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և բյուջեով չնախատեսված ծախսերի համար:

2. Կապիտալ՝ ֆոնդային ծախսերը կազմում է 168098.7 հազ. դրամ. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումով նախատեսվել է 58481.0 հազար դրամ, շենքերի և շինությունների շինարարության համար նախատեսվել է 107557.7 հազ. դրամ, այլ հիմնական միջոցներ՝ 60.0 հազ. դրամ, մեքենաներ և սարքավորումներ՝ 2000.0 հազ. դրամ: Տարբերություն 35000.0 հազ. դրամը նախատեսված է հողի օտարումից որպես մուտք, այդ պատճառով էլ ընդամենը ֆոնդային ծախսերում թվային չի արտացոլվում:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025Թ-Ի ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

ՄԱՍ I

Փամբակ համայնքի ղեկավարի զեկույցը 2025 թվականի Փամբակ համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Փամբակ համայնքի զարգացման 2022-2026 թվականների հնգամյա և Փամբակ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Փամբակ համայնքի 2025 թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2024 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, Փամբակ համայնքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու համայնքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը և մատչելի ծառայությունների տրամադրմանը: Փամբակ համայնքի 2025 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը հիմնված է համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:
3. Ներհամայնքային, միջհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների կապիտալ և ընթացիկ նորոգումը:
4. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանումը:
5. Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների շարունակական զարգացումը:
6. Աղբահանության որոկի բարձրացումը և կառավարման ժամանակակից համակարգի ստեղծումը:
7. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
8. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
9. Նախադպրոցական հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
10. Կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
11. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
12. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը,
13. Խաղահրապարակների կառուցում:
14. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում և նոր օջախների կառուցում:

15. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:
16. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:
17. Համայնքի բնակչության պատսպարումն ապահովելու և պաշտպանական կառույցները պատրաստ վիճակում պահելու նպատակով պաշտպանական կառույցների ուսումնասիրություն և արձանագրված թերությունների վերացում:
18. Համայնքի բնակչության ազդարարման համար նախատեսված վերջույթային սարքավորումների (էլեկտրաշչակ և էլեկտրաշչակների կառավարման վահանակ) ձեռքբերման, տեղադրման և կենտրոնացված ազդարարման համակարգին միացման աշխատանքների կազմակերպում և իրականացում:

ՄԱՍ II
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բացատրագիր-Հիմնավորում

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեն հաստատելու հիմնավարման մասին:

<u>Համայնքի բյուջեի եկամուտներ</u>

Հարկային եկամուտների ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվել առկա ապառքները և 2024 թվականի հաշվարկային ցուցանիշները, քանի որ դեռևս 2025թ-ի հաշվարկային ցուցանիշներ չունենք: Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային մասը կազմում է 743179,1 հազար դրամ, 2024թ-ին կազմել է 681915.7 հազար դրամ, 2025թ-ի եկամուտները 2024 թ-ի համեմատությամբ ավելացել է 61263,4 հազ. դրամով:
Որից հարկեր և տուրքեր 2025թ-ին նախատեսվել է 103685.0 հազ. դրամ, 2024թ-ին կազմել է 99362.2 հազ. դրամ, 2025թ-ի հարկերը և տուրքերը 2024 թ-ի համեմատությամբ ավելացել է 4322,8 հազ. դրամով:
Պաշտոնական դրամաշնորհներ /դոտացիա/ 2025թ-ին նախատեսվել է 599720.1 հազ. դրամ, 2024թ-ին հատկացվել է 514464,7 հազ. դրամ: 2025թ-ի դոտացիան 2024 թ-ի համեմատությամբ ավելացել է 85255,4 հազ. դրամով:
Այլ եկամուտներ՝ 2025թ-ին նախատեսվել է 39774.0 հազ. դրամ / որից՝ գույքի վարձակալություն՝ 10774.0 հազ. դրամ, վարչական գանձումներ՝ 19000.0 հազ. դրամ,

այլ եկամուտներ՝ 10000.0 հազ. դրամ/: Նախորդ՝ 2024թ-ին այլ եկամուտ է նախատեսվել 68088.8 հազ. դրամ, 2025թ-ի այլ եկամուտները 2024 թ-ի համեմատությամբ պակասել է 28314.8 հազ. դրամով, քանի որ կրճատվել է կազմակերպությունների կողմից համայնքին հատկացվող նվիրաբերությունը:

<u>Համայնքի 2025 թ-ի բյուջեի եկամուտներ</u>

Ընդամենը եկամուտներ 743179,1 հազար դրամ

այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով 743179,1 հազար դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով 133098,7 հազար դրամ /Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում/

<u>Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման</u>

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսերը կազմում է.

Ընդամենը ծախսեր 743179,1 հազար դրամ

այդ թվում

- Վարչական բյուջեի մասով 743179,1 հազար դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով 133098,7 հազար դրամ

Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, բաշխվել են հետևյալ կերպ.

3. Ընացիկ՝ վարչական ծախսերը կազմում է 743179,1 հազար դրամ. Աշխատողների, աշխատավարձեր և հավելավճարներ հաղվածով նախատեսվել է 241447.1 հազար դրամ: Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսվել է 78986.0 հազ. դրամ: Դրամաշնորհ Փամբակ համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ներին՝ 268543.3 հազ. դրամ: Սոցիալական նպաստներ համայնքի անապահով ընտանիքներին՝ 6000.0 հազ. դրամ: Այլ ծախսեր՝ 148202.7 հազ. դրամ, որի մեջ մտնում է նաև պահուստային ֆոնդը՝ 142942.7 հազ. դրամ, որը հետագայում կօգտագործվի ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և բյուջեով չնախատեսված ծախսերի համար:

4. Կապիտալ՝ ֆոնդային ծախսերը կազմում է 168098.7 հազ. դրամ. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումով նախատեսվել է 58481.0 հազար դրամ, շենքերի և շինությունների շինարարության համար նախատեսվել է 107557.7 հազ. դրամ, այլ հիմնական միջոցներ՝ 60.0 հազ. դրամ, մեքենաներ և սարքավորումներ՝ 2000.0 հազ. դրամ: Տարբերություն 35000.0 հազ. դրամը նախատեսված է հողի օտարումից որպես մուտք, այդ պատճառով էլ ընդամենը ֆոնդային ծախսերում թվային չի արտացոլվում:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2024 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի փետրվարի 13-ին, ժամը 14:00-ին:

2. Նիստը կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ. Փամբակ, 1-ին փողոց, 23 շենք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը